Իվնինկ–Ոդէռի[1] Ուաշաբեկոռթիւնը.

Իվնինկ–Ոդէռ շոգենաւը Նոր–Եօռքէն ճամբայ ելաւ Նոր–Օռլէան երթալու համար, սեպտեմբերի 20ին շաբաթ օրը կէսօրուընէ ետքը ժամը իրեքուկէսին։ Նաւուն մէջ գրեթէ 300 ճանապարհորդք կային, և բաց 'ի ուրիշներէ կատակերգակներու խումբ մը որոնք վարձուած էին Նոր–Օռլէանի համար. այս խումբին մէջ կային շատ մը գաղղիացիներ որոնք դեռ նոր հասեր էին Հավռէն։ Խարիսխ վերցընելու ժամանակը օդը քաղցր էր և հաճոյական. քամին կը զովանար ատեն ատեն և երագ ու երկանիկ ծովաչուի մը յոյսը կը շատցընէր։ Ամենքն՝ալ ուրախ զուարթ էին նաւուն վրայ. քիչ անգամ ճամբորդութիւն մը սկսած էր ասկէ աւելի բարենշան գուշակութեամբ. բոլոր ուղևորները ձեղուանին (pont) վրայ էին նաւահանգստէն ելելու միջոցը. և ցամաքէն բաւական հեռանալէն ետքը՝ կատարեալ ապահովութեան մը զգացմունքով իւրաքանչիւր ոք յետին ծնաս բարով կ'ըսէր Լոնկ Այլէնտի (Long Island) և Նոր–Ճէռսէյի՝գեղեցիկ ափունքներուն։

Այն ատեն կը տիրէր արևելեան սուր քամի մը որ կը շարժէր ծովը և նաւը սաստիկ կը տարուբերէր։ Երկրորդ օրը կիրակին քամին մեղմացաւ և ծովը իջաւ։ Հոկտեմբերի 1ին Հէդդրասի (Hatteras) երկիւղալի հրուանդանը անցան աղուոր օդով մը։ Բայց 2ին՝ երեքշաբթի օրը սկսաւ արևելեան–հարաւային սաստկաշունչ քամիով մը. և ծովը ալէտանջ էր. երիկուան դէմ մրրիկը փրթաւ և շուտով մը փոթորկի չափը հասաւ։

Կէս գիշերուն ծովը կատղած էր. Իվնինկ–Ոդէռը յալ ու ձախ կը տատանէր յարդի շիւղի մը պէս և վտանգաւոր դիրք մը կ'առնուր. ահագին կոհակներ նաւը կը մտնային և անիւներուն երկու ուռուցիկ պատեանները կը խլէին, ջուրը հեղեղաբար կը խուժէր նաւուն մէջ և հոն կը դիզուէր. տագնապն ամենքն առեր էր. կնիկները ըստէպ ստէպ հարցմունքներով նեղը կը խոթէին նաւապետը և պաշտօնակալները՝ որ կը ջանային իրենց վախերը փարատել։

Քամին հետզհետէ կը զայրանար. ծովը երթալով կ'ուռէր. ամպերը միապաղաղ զանգուածի մը պէս խտացած կարծես թէ նաւուն վրայ կը հեծնային. գիշերը սոսկալի կերպով մութ էր, պաշտօնակալները, նաւաստիները ամենքը ոտքի վրայ էին և կը պատրաստուէին յայտնապէս որոշիչ բանի մը. վերջապէս սարսափը կատարեալ եղաւ, երբոր նաւապետը հրամայեց որ բոլոր կընիկները փակեն սենեկի մը մէջ. մեծ պատերազմ մը պիտի տրուէր. նաւը պաշարման վիճակի մէջ դրուած էր սանձակոտոր տարերքներէն։ 240 մղոն հեռու էին ան ժամանակը Մադանիհայի ժայռէն դէպ 'ի հիւսիսային արևելեան կողմը, և ցամաքէն 180 մղոն։

Առտուան ժամը 3ին դէմ մրրիկը սաստկացած էր անլուր գազանութիւնը. ղեկին շղթան ելած էր ճախարակէն և ալ չէր բաներ. ջրոյ հեղեղներ կը սրբէին զայն և կ'ընկղմէին. մեքենային սենեկին պատուհանները խախտած էին. հնոցները ողողած էին և մարեցան. վառեցին օգնական մեքենայն, բայց խողովակ մը ճաթելով գործիքը կեցաւ. վերջապէս Իվնինկ–Ոդեռը առանց անուոց, առանց ղեկի, առանց շոգւոյ, առանց օգնական կամ առաջնորդ բան մ'ունենալու, անզօր խաղալիկ եղաւ ահաւորագոյն մրրկին որ երբէք եղած ըլլար այն ափունքները։ Ա'ն ամեն բան՝կորսուած էր. առտուան ժամը 5ն էր. նաւապետը յայտնեց ճամբորդներուն որ մարդկային ամեն ջանքերը 'ի գործ դրուած էին, ջրհանները բանի չէին դար, և թէ որ կը մնար յուսոյ նշոյլ մը, պէտք էր որ ամենքը ձեռք զարնէին աշխատելու՝ չէ թէ արգիլելու որ նաւը ծովասոյզ չըլլայ, որ այնուհետ

1 Անդղիերէն Էրէիոյեան ասոր կը նշանակէ։

տև անկարելի էր, հապա գոնէ քանի մը վայրկենի չափ ուշացնելու համար անճողոպրելի կորուստը։ Այն ատեն ոչ հասակ և ոչ տեսակ նայուեցաւ. երիկ մարդիկ, կնիկներ, տղաք, իւրաքանչիւր ոք յուսահատութեան քաջութիւնը, կենաց պահպանութեան ամենամեծ բնազդմանը տուած ուժովը, ձեռք զարկին ջուրը պարպելու անհնարին աշխատութեանը, որ վայրկենէ վայրկեան կը բարձրանար լցարանին (cale) և դըստիկոններուն (entrepont) մէջ։ ամեն բան ճամբուն վրայ լցելով, գլորտակելով թէ ներս թէ դուրս անդիմակաց յորձանք մը որ գետին կը կործանէր աշխատողները և հետզհետէ տեղերնէն խախտել կու տար։

Այս միջոցիս նաւապետը հրաման կու տար քակելու մակոյկներուն չուանները. բայց կարելի բան չէր ծով իջնելը. կոհակները զանոնք կ'առնէին և գնտակներու պէս նաւուն կողին կամ ձեղունը կը զարնէին։ Ամենքը կատաղութեամբ անոնց վրայ կը վազէին և կը ճանկռտէին դեռ չնետուած։

Շփոթութեանը չափ չկար. ամենայն ոք իր անձին համար կը կռուէր, և աղաղակները կը կորսուէին մրրկին մռնչիւններուն մէջ։ Նաւը կ'ընկղմէր. կնիկները զգեստնին մերկանալով և իրենց սաստիկ զարհուրանքէն վարուած՝ կը նետուէին խենթի պէս փրփրոյն մէջ որ չորս կողմէն կը վխտար։

Դեռ ժամ մը անցեր էր այս յետին կռուոյս մէջ. վերջապէս ժամը վեցին կարծես թէ բովանդակ Ովկիանոսը մէկ ալիքի մը պէս վեր ելլելով նաւը պառկեցուց. ահագին լեռը փլաւ բոլորովին. ալ լմնցած էր. Իվանիկ–Ադէռը թաղուեցաւ անդունդին մէջ, և իրեն հետ մարդկային արարածներու ամբողջ աշխարհք մը որոնցմէ մէկ քանի հոգի միայն պիտի ապրէին այս սոսկալի թըշուառութիւնս պատմելու համար։

Մն ատեն սկսաւ տեսարան մը զոր ամենևին գրիչ մը չիկրնար պատմել, զոր ո և իցէ վրձինը չկրնար նկարել։ Մակոյկները ցրուած էին հոս և հոն, ծածանելով պարապ, ողն 'ի վեր դարձած կամ ջրով լեցուն, ամեն տեսակ բանի կտորուանք, ջախջախած տախտակներ, նաւուն խելքին բարձրաւանդակը (dunette) ջարդուբարդ եղած, բոլոր ջրին երեսը լողացող բաները զատ զատ լաստերու պէս կը գլորտակէին, կը զարնուէին, զիրար կը խորտակէին, շարժուն քաոս մը աւերակներու զորոնք քամին և ծովը վեր կը նետէին ամենայն ուժով, և այս վիթխարի կտորներուն մէջ՝ մարդիկ, կնիկներ, տղաք որ կը ճանկռտէին ասդիս անդին, կը ծածանէին անզգայ, և կը ճգմուէին այս անդադար ելևէջքէն և ծփմունքէն։

Սակայն մակոյկներէն երկուքը կըրցեր էին ձեռք ձգել մէկ քանի ողորմելիներ և հոն լեցուէր էին. մէկուն մէջ կային մարդիկ և կին մը որ կը կարծուի թէ գաղղիացի կատակերգակներուն խումբէն ըլլայ, միւսը կէս 'ի կէս լեցուն էր մարդիկներով և կնիկներով։ Ամենքը գրեթէ մերկ էին. ծովը իր կատաղութենէն ամենևին չէր զիջած. իւրաքանչիւր վայրկենի մակոյկները կը շրջէին, ամեն անգամ կորսընցընելով հոն ապաւինեալ թշուառներէն մէկը։ Գիշերը քամին հանդարտեցաւ և կըրցան մէկ քանի յանպատրաստից առագաստներ բանալ։ Այս երկու նաւակներս են որ ազատեցան. մէկուն հանդիպեցաւ 5ին՝ Ֆլիդվիկ նաւակը որ զիրենք խալըսեց, մէկալը հասաւ Ֆէրնանտինա։

Դրուագներ պատմելը սոսկումը պակսեցընել է. սակայն կան զորոնք լռութեամբ անցնիլը անկարելի է. շատ են ասոնք, և ամենն ալ սարսափելի։

Լսենք թէ ինչպէս ապրողներէն մէկը Պ. Հարրիս, կը պատմէ իր հրաշալի փրկութիւնը։

« Մարդիկ և կանայք կը ծածանէին ասդիս անդին, բռնելով ինչ որ ձեռուընին կու գար. ճիչերը կը կորսուէին քամիին ոռնաձայներուն մէջ. տախտակի կտոր մը բռնեցի՝ բայց պէտք եղաւ որ մէկդի նետեմ՝ ծովածուփ կտորներէն չճզմուելու համար. վայրկեան մը ետքը

նաւուն սենեկին մէկ մասը անցաւ. վը-
րան ելայ ճանկռտելով, բայց տասը
անգամ հոնկից զատուեցայ և նորէն
բռնեցի՝ պատռտելով ձեռուներս և
անդամներս սայրասուր կտորներուն
մէջ։ Այսպէս երկու կամ երեք ժամ
պատերազմեցայ, իմ շարժուն հրուան-
դանէս երբեմն երբեմն կրնայի դիտել
բոլոր տեսարանը։ Ցեսայ տափարակի
պէս բան մը որ խորտակած ձեղունը
մէկ մասէն ձեւացած էր, և որուն վրայ
դիզուած էին հարիւր հոգիէ աւելի յու-
սահատութեան ամեն դիրքերուն մէջ
իրենք զիրենք ուտելով։ Գլխիվայր դար-
ձած մակոյկ մը երևցաւ ինծի քիչ մը
հեռուն. ելայ ապաւինութեան տեղէս
և լողալով անոր ետևէն գացի. հասայ,
խել մը հոգի հոն կպած կեցեր էին.
դարձուցինք մակոյկը և մէջը մտանք.
տասն էինք թուով. չկրնալով կառա-
վարել զայն՝ բոլոր օրը նաւաբեկութե
տեղն անցուցինք. իրիկունը աչքէ
կորուսինք. երկայն ժամերով ջրին մէջ
թաղուած էինք. ծարաւն սկսաւ զմեզ
տանջել. ոմանք խմեցին աղի ջուրը,
բայց անով ալ աւելի ծարուեցան. ու-
րիշներն իրենց մեզը խմեցին, և քիչ մը
մխիթարուեցան։

» Մարդ մը անցաւ մօտերնէս թիա-
կի մը պլլուած, զինքը ներս առինք և
զմեզ կառավարելու միջոց մ՚ունեցանք։
Իրիկուան ժամը ութին հանդիպեցանք
մէկալ մակուկին, որուն մէջն էին եր-
կրորդ տեղակալը հանդերձ ինը մար-
դիկներով։ Գիշերուան մէջ զիրար աչքէ
կորուսինք, և 5ին առաւօտը զմեզ գը-
տաւ Նորուեգիացի Ֆլիդվիկի պուքը։

» Մինչդեռ մակուկին մէջն էինք,
գրեթէ տասնրութը տարեկան դեռա-
հասակ գաղղիացի կին մը ճանկռտեց
նաւուն եզերքը և հոն գամուած մնաց
երկայն ատեն. երեք անգամ նաւակ-
նիս դարձաւ, և երեք անգամ նորէն նա-
ւակը բռնեց. չորրորդ անգամին խիստ
ուժէ ընկած էր և աներևոյթ եղաւ.
մենք ալ շատ յոգնած էինք ու չէինք
կրնար իրեն օգնել. ամենքնիս ալ ա-
ւելի կամ պակաս վիրաւորուած էինք
և ծովուն ջուրը մեր վէրքերը չարաչար
կը ցաւեցնէր և կսկիծցնէր։

» Այս մակուկիս մէջ էր նաև նաւա-
պետը, որ չորս անգամ նաւակը ելաւ և
չորս անգամ շրջելէն ետքը, գերան մը
գլխուն զարկաւ և զինքն սպաննեց »։

Ահաւասիկ ուրիշ ցաւագին տեսա-
րան մը. երկու մակոյկներէն մէկուն
դառնալու ատենը սոսկալի կռիւ մը
փրթաւ նորէն մէջը մտնալու համար,
հնոցպան (chauffeur) մը և գաղղիացի
մը դիմացէ դիմաց հանդիպեցան. գաղ-
ղիացին կը պոռար անդադար. «Կնիկս,
կորսընցուցի կնիկս »։ Այս երկուքը
քայրկեան մը դիրկ ընդ դիրկ զիրար
բռնեցին, յետոյ սոսկալի բռնութեամբ
մը հնոցպանը սրունքը երկընցընելով
ուժով կից մը զարկաւ գաղղիացւոյն
կուրծքը որ ընկղմեցաւ։

Կը լմնցընենք այս աղետալի նկարա-
գրութիւնս վկայութիւն մը զոր կը գըտ-
նանք ապրողի մը պատմութեան մէջ։
Թէ երիկ մարդիկ և թէ կնիկ ճանա-
պարհորդներէն շատերը անանկ քա-
ջութիւն և անխռովութիւն մը ցուցին՝
որ իրաւցընէ արժանի է ճշմարիտ զար-
մանքի մը։ Երբոր մեքենայն անգործա-
ծելի եղաւ, կնիկները սկսան մեծաւ
կտրճութեամբ ամեն կարելի հնարքնե-
րը բանեցնել ջուրը պարպելու հա-
մար. մէկդի նետեցին այն ամեն զգեստ-
ները որ կրնային իրենց արգելք ըլլալ։
Ժամացոյցներ, միտալներ, մատնիներ,
զարդի ասեղներ, գոհարներ, բոլոր ձե-
ղունը վրայ ցանուած էին. չլսուեցաւ
կամ չտեսնուեցաւ տրտունջ մը, յու-
սահատութիւն մը։

Ուրիշ մարդ մըն ալ ապրեցաւ այս
նաւաբեկութենէս, այն է երկրորդ տե-
ղակալն. Կուլտոպի որ Ֆլորիտայի եզեր-
քը Մէյբօռդ-Միլը եկաւ, ձգած ըլլալով
նաւաբեկութեան տեղը կնիկներով լե-
ցուն մակոյկ մը։

Բայց աւաղ. այս նոր դիպուածս մեր
վերը նկարագրած սոսկալի տեսարան-
ներուն վրայ ուրիշ սարսափի դրուագ
մը կ՚աւելցընէ։

Բոլոր այս թշուառ կնիկները մեռան

ցամաքը տեսնալէն առաջ. ամենքն ալ, բաց 'ի երկուքէ, որ կիսակենդան ցամաք հասնելով՝ մեռան ծովեզերաց առջև՝ փրկութենէն երկու քայլ հեռու, նաւակէն ելլելու ատենը։ Այս երկու խեղճերը Աննա և Վարդուհի՝ Նոր-Եօրքէն՝ խենթ դարձած էին յուսահատութենէ, անօթութենէ, սարսափէ։ Ինկան՝ մանաւանդ թէ իրենք զիրենք ծով ձգեցին, մէկը շանաձուկներէ կերուեցաւ. միայն մարդը ցամաք ելաւ կիսամեռ։ Ի՞նչ տխուր պատմութիւն։

Տխուր պատմութիւն իրաւցընէ, որուն մէջ ամենայն ինչ դժնդակ է, որուն մէջ մէկ մխիթարութիւն մ'ալ չկայ։

Հետզհետէ տարակոյսը հը հաստատուի որ Իվանիկ-ադէռը բաւական ամուր եղած չըլլայ ամեն կարևոր ապահովութիւնը տալու համար.

Հնդկաց որբևարի կանանց սովորութիւնը.

Գառապաշտ Հնդկաց մէջ բարբարոսական սովորութիւններէն մէկն ալ այն էր որ որբևարի կանայք իրենք զիրենք կենդանւոյն կրակը կը նետէին 'ի նշան հաւատարմութեան և սիրոյ իրենց ամուսնացը։ Այս հանդէսս ըստ աստիճանի իւրաքանչիւրին խիստ փառաւոր և կամ միջակ հանդէսով կը կատարուէր։ Եթէ կինը ազնուական ցեղէ ըլլար, իր ամուսնոյն դիակը այրելու ժամանակ ինքը խարուկին քով հերարձակ և ցաւագին անձամբ նստած՝ յուսահատաբար մաղերը կը փետտէ, կուլայ, կը պոռայ մինչև որ դիակը բոլորովին աճիւն դառնայ. անկէ ետքը հանդարտելով այնպիսի զուարթութիւն մը կը ցուցընէ որ կարծես թէ աշխարհիս վրայ ամենէն աւելի մխիթարեալ և երջանիկ կինն ինքն ըլլար։ Նոր հարսի մը նման գեղեցիկ զգեստներով և թանկագին ակունքներով կը զարդարուի, և հոտաւէտ իւղերու մէջ թաթղուած՝ մէկ ձեռքը հայելի մը, մէկալ ձեռքն ալ ոսկեգոյն գեղեցիկ պըտուղ մը բռնած, նուագածուաց խըմբի մը մէջ պարելով, բոլոր իր ազգականները և բարեկամները հրաւիրելու կ'երթայ՝ որ իրեն հետ միատեղ դաշտը գան, ուր որ իր ամուսնոյն մարմինը այրեցաւ։ Իսկ թէ որ այս հրաւէրքս ինքը անձամբ չուզենայ ընել՝ զուրիշները կը խաւրէ իրեն տեղը, և ինքը ինչպէս նաև իր ազգականները, բոլոր օրերնին կաքաւներով և տեսակ տեսակ բարբարոսական ուրախութիւններով կ'անցընեն, ինչպէս թէ ամեն օր հարսանիք ըլլար։

Վերջապէս սահմանեալ ժամանակը հասնելով, առաջինէն աւելի հարուստ և գեղեցիկ զգեստներով և ազնիւ գոհարներով զարդարուած դուրս կ'ելլէ, և որպէս զի ամենն ալ զինքը լաւ կարենան տեսնել՝ սպիտակ ձիու մը վրայ նստած, փողերու ձայներով բոլոր իր ազգականներուն հետ միատեղ՝ երկայն ժամանակ քաղքին երեսի և բազմամարդ փողոցներուն մէջ վեր վար քալելէն ետքը, նորէն կը դառնայ այն տեղը ուր իր ամուսնոյն աճիւնքը իրեն գալըստեանը կ'սպասեն։ Այն տեղը իրեն համար փոս մը կը պատրաստեն, որուն խորութիւնը և լայնութիւնը մարդու մը հասակէն քիչ մը աւելի մեծ է, այս փոսս իւրաքանչիւրին հարստութեանը համեմատ մինչև 'ի վեր լեցուն է հալուէներով և տեսակ տեսակ անուշահոտ և թանկագին փայտերով։ Փոսին եզերքը տախտակամած բարձրաւանդակ մը կայ, որուն վրայ կ'ելլէ այրին 'ի տեսիլ անբաւ ժողովրդոց, որոնք հոն վրայէ վրայ դիզուած հանդիսին կ'սպասեն։ Ան միջոցին ինքը բարձրաւանդակին վրայ ելած՝ երեք անգամ չորս կողմը կը դառնայ և ինքը զինքը հանդիսականաց ցուցընելէն ետքը, դէպ 'ի արևելեան կողմը դառնալով ձեռուընները երկինք կը բարձրացնէ և երեք անգամ կը ծռի անոնց։ Այս արարողութիւններէս վերջը կամաց կամաց կ'սկսի բո-